

եղբարքն այսպէս սատակեցան. անկեալ զնէին ի ներքոյ եպիսկոպոսանոցին ի տեղւոջն բաղմականացն»⁽⁵⁸⁾: Վկայութիւնն որոշ է, եպիսկոպոսանոցը ունէր տաճար (ճաշարան) եւ իր գորղերը: Ասոր վրայ կըրնանք աւելցնել Ուխտանէսի վկայութիւնը, ըստ որուն՝ Մովսէս Բ կաթողիկոսի օրով (574-604) հայրապետանոցին կահին եւ զանձատան պարունակութեան հետ կը յիշուի նաեւ «ղարկանելի քահանայից եւ սարկաւաղաց»⁽⁵⁹⁾: Իննեւորդ դարուն Բագուանու Ս. Գրիգորի եկեղեցիէն Արարացուոց ձեռք բերած կողոպուտին մէջ կը յիշուի «ղարկանելիս»⁽⁶⁰⁾: 972ին Հայոց Սաշիկ կաթողիկոսը Արզինայի (Շիրակ) կաթողիկէին շինութեան առթիւ եկեղեցիին կահաւորման համար կը նուիրէ «ծիրանածաղիկ, ոսկեթել անկուած»⁽⁶¹⁾: Դարձեալ նոյն դարուն Հայոց Կատրամիտէ թաղուհին Անիի կաթողիկէին կը նուիրէ «ծիրանածաղիկ, ոսկեթել, նկարապործ անկուած»ներ⁽⁶²⁾: Դերենիկ Արծրունիի տաճարին մէջ կային «բաղմերանդ բաղմականս ոսկեղարդ զանձիցն»⁽⁶³⁾: 1576ին S. Von Gerlach Կ. Պոլիս իր այցելութեան առթիւ կը գրէ որ «պատրիարքը⁽⁶⁴⁾ կապերտի մը վրայ կեցած է եղեր բոպիկ ոտքերով», եւ Հայոց եկեղեցիին «խորանին առջեւ, զետինը ռալարկուած է ու վրան զորղերով ծածկուած»⁽⁶⁵⁾: Անթուակիան յիշատակարան մը կը յիշէ որ Վանեցի Սօջայ Պօղոս Կրէտէի Ս. Կարապետ եկեղեցիին կը նուիրէ ի միջի այլոց՝ «խալիչէ մի բեմին», հաւանաբար Ժէ դարուն: Դարձեալ նոյն դարուն անթուակիան յիշատակարան մը, «Առաքել՝ լաւ կապերտ մը ետուր Մր. Կարապետին»: Ոմն Դուկաս, ի միջի այլոց խալի մը կու տայ Ս. Սարգսի, նոյնպէս եւ Վարդանէս⁽⁶⁶⁾: 1677ին Ֆիլիպէ քաղաքին (Պուլկարիա) Ս. Գէորգ եկեղեցիին նուէրներու ցանկին մէջ կը կարդամ «Աստուած լուսաւորէ Մկրտիչ Անկիւրցի, ետ յիշատակ մի կապերտ»: 1637ին Adam Olearius կը վկայէ որ Նոր Զուղայի մէկ «(եկեղեցւոյն) զետինը ծածկուած էր երկրին յատուկ գորղերով»⁽⁶⁷⁾: Gemelli որ իբր ահանատեա կը գրէ, առանց սակայն իտալիոյ իր սենեակէն դուրս ելլելու, միայն ուրիշ գրողներու ըսածները օգտագործելով, կը հաստատէ թէ՛ Նոր Զուղայի մեծ եկեղեցին (ն^օրը, յայտնի չէ), ուր իբր թէ ինքը դացած է պատարալ լսելու, ունէր մինակ խորան մը, ուր դպրաց դասը զետնէն հինգ աստիճան բարձր էր, եւ երկուքն ալ ծածկուած էին ճոխ գորղերով, եւ հայերը նախ քան անոնց վրայ կոխելը՝ կը հանէին իրենց

(58) Դպրութիւն Գ: Գլուխ 19:

(59) Էջմիածին, 1871, Բ. մաս, էջ 66:

(60) Յովհ. կաթ.: Երուսաղէմ, 1867, էջ 139:

(61) Ասողիկ: Պետերբուրգ, 1885, էջ 185:

(62) Անդ, էջ 248:

(63) Թում. Արծրունի, Կ. Պոլիս, 1853, էջ 301:

(64) Յովհաննէս Եպր. Տիարպէթիբի, 1573-1581:

(65) Գ. Հնասէր: - Կոչնակ, 1928, նիւ ետրք, էջ 1515, եւ 1932, էջ 1217:

(66) Աճառեան, Թարգմանի Զեո. ցուցակը, էջ 21 ր: Այս նախնադասութեանց թրակոսը այժմ էր ընդունիլ 1674 կամ 1774:

(67) The Voyages. — London, 1669, p. 205.